

**ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ, 1890-ԱԿԱՆ ԹԹ. ԶԱՐԴԵՐԸ ԵՎ 1909Թ. ԱԴԱՆԱՅԻ ԿՈՏՈՐԱԾԸ ՌԱՖԱՅԵԼ ԼԵՄԿԻՆԻ «ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐՔԱԶԱՓ ՁԵՌԱԳՐՈՒՄ»**

*Նաբեկ Պողոսյան*

Ռաֆայել Լեմկինի գիտական ժառանգության մեջ ցեղասպանությունների և դրանց պատմության հետազոտության շարքում առանձնահատուկ տեղ են գրավում Հայոց ցեղասպանության վերաբերյալ նրա ուսումնասիրությունները:

Ռաֆայել Լեմկինի արխիվային մեծաքանակ նյութերի մի մասը պահպանվում է Նյու Յորքում գտնվող Ամերիկայի հրեական պատմական ընկերակցությունում՝ Ռ. Լեմկինի հավաքածուի տեսքով<sup>1</sup>: Արխիվային նյութերը հիմնականում ամփոփված են 12 ձեռագրերի պահոցների մեջ: Նյութերի որոշ մասը մատչելի է նաև առցանց տարբերակով: 8-րդ պահոցի թիվ 14-րդ թղթապանակում պահպանվել է Ռ. Լեմկինի 139-էջանոց ձեռագիրը հայերի կոտորածների վերաբերյալ<sup>2</sup>: Այս ձեռագրին Լեմկինի ժառանգության համար գրացուցակ կազմած անձը տվել է «Հայկական կոտորածների վերաբերյալ գրքաչափ ձեռագիր» անվանումը (այսուհետ՝ Գրքաչափ ձեռագիր): Այս ձեռագիրը բաժանված է հետևյալ 7 ենթաբաժինների. 1. Հայերը, ընդհանուր պատկեր, 2. Հարկում, 3. 1890-ականների կոտորածները, 4. 1909թ. Ադանայի կոտորածները, 5. 1915-1916թթ. կոտորածները և տեղահանությունները, 6. Սպանելու մտադրությունը, ո՞վ է մեղավոր, 7. Արձագանքներն արտասահմանում:

Հոդվածում քննության են առնվում Գրքաչափ ձեռագրի առաջին 4 ենթաբաժինները. 1. Հայերը, ընդհանուր պատկեր, 2. Հարկում, 3. 1890-ականների կոտորածները, 4. 1909թ. Ադանայի կոտորածները: Գրքաչափ ձեռագրի ուսումնասիրությունը թույլ է տալիս բացահայտել Լեմկինի կողմից արված դիտարկումները, որոնք վերաբերում են ինչպես Օսմանյան կայսրության կողմից 1890-ականն թթ. համիդյան ջարդերի և 1909թ. Ադանայի կոտորածների իրագործմանը, այնպես էլ Հայկական հարցի միջազգայնացմանը և հայերի պատմական առանձնահատկություններին: Ուսումնասիրության շրջանակում փորձ է կատարվում ներկայացնել, թե ինչ աղբյուրագիտական հենք ունի Գրքաչափ ձեռագիրը:

Այս ձեռագիրը գրեթե ուսումնասիրված չէ: 2008թ. «Հայկական հիշողության կենտրոն» (Center for Armenian Remembrance) կազմակերպությունը հրատարակել է «Ռաֆայել Լեմկինի թղթապանակը (դոսյեն) Հայոց ցեղասպանության մասին» գիրքը, որում որոշ կրճատումներով հանդերձ տեղ է գտել նաև «Հայկական կոտորածների մասին գրքաչափ ձեռագիրը»<sup>3</sup>: Գիրքը հրատարակության է պատրաս-

<sup>1</sup> St'u Guide to the Raphael Lemkin (1900-1959) Collection, P-154( <http://digifindingaids.cjh.org/?pID=109202>):

<sup>2</sup> St'u Raphael Lemkin Collection, Box 8, folder 14, *Turkish Massacre of Armenians - Book-Length Manuscript*.

<sup>3</sup> Raphael Lemkin's dossier on the Armenian Genocide: *Turkish massacres of Armenians*, manuscript from Raphael Lemkin's collection, American Jewish Historical Society, Center for Armenian

տել ամերիկահայ անվանի փաստաբան Վարդգես Եղիայանը: Առաջաբանի հեղինակն իրավագիտության պրոֆեսոր Միխայիլ Բազլերն է:

Ալաբամայի համալսարանի պրոֆեսոր Ստիվեն Ջեկոբսն իր հոդվածում<sup>4</sup> հպանցիկ վերլուծել է Լեմկինի Գրքաչափ ձեռագիրը՝ նշելով, որ ամենայն հավանականությամբ գրվել է ՄԱԿ-ի կողմից Ցեղասպանության կոնվենցիայի ընդունումից հետո (1948թ.), քանի որ 1945-ից մինչև 1948թ. Լեմկինը կենտրոնացած էր հրեաների հանդեպ նացիստների կատարած ջարդերի վրա: Ս. Ջեկոբսը դժվարանում է նշել, թե արդյոք ձեռագիրը գրվել է 1950-1953թթ. Կորեական պատերազմից առաջ, թե՞ պատերազմին հաջորդող շրջանում:

### ա. Գրքաչափ ձեռագրի աղբյուրագիտական հենքը

Գրքաչափ ձեռագրում Լեմկինն օգտվել է բազմաթիվ աղբյուրներից, որոնք հարուստ տեղեկություններ են պարունակում Օսմանյան կայսրությունում հայերի նկատմամբ իրականացված ցեղասպանական գործողությունների մասին: Ձեռագրում մեջբերված են հատվածներ ինչպես ականատեսների վկայություններից, այնպես էլ տարբեր փաստաթղթերից, նամակներից, մամուլի հրապարակումներից:

- Որպես աղբյուր՝ նա օգտվել է Հերբերտ Ադամս Գիբբոնսի «Ժամանակակից պատմության ամենասև էջը» (*The Blackest Page of Modern History*) գրքից<sup>5</sup>: Հերբերտ Ադամս Գիբբոնսն աշխատել է որպես «Նյու Յորք Թայմս» թերթի արտասահմանյան թղթակից, նա իր գործունեության վաղ շրջանն անցկացրել է Թուրքիայում: 1909թ. Գիբբոնսն անձամբ ականատես է եղել թուրքերի կողմից հայերի և հույների վրա հարձակումներին: Գիբբոնսն այս գրքում նկարագրում է երիտթուրքերի կողմից Հայոց ցեղասպանության իրագործումը<sup>6</sup>:
- Մյուս գիրքը, որից փաստական տվյալներ է բերել Լեմկինը, Մկրտիչ Գաբրիելյանի «Հայաստանը՝ մի նահատակ ազգ» (*Armenia: A Martyr Nation*) գիրքն է<sup>7</sup>: Մկրտիչ Գաբրիելյանը բողոքական եկեղեցու հովիվ էր և բժիշկ ԱՄՆ-ում, հեղինակել է 3 գիրք՝ լինելով նաև մեկ գրքի համահեղինակ, որոնք հայ ազգին և Օսմանյան կայսրությունում հայերի նկատմամբ իրականացված բռնություններին են վերաբերում<sup>8</sup>: «Հայաստանը՝ մի նահատակ ազգ» գրքում հեղինակը համառոտ շարադրում է հայոց պատմությունը, հասցնում վաղ շրջանից համի-

Remembrance, Vartkes Yeghianyan, Glendale, 2008.

<sup>4</sup> Տե՛ս Steven L. Jacobs, *Confronting the Armenian Genocide*, Raphael Lemkin and the Armenian Genocide, Richard G. Hovannisian, *Looking Backward, Moving Forward*, էջ 130:

<sup>5</sup> Տե՛ս Herbert Adams Gibbons, *The Blackest Page of Modern History*, G. P. Putman's Sons, New York and London, 1916:

<sup>6</sup> Տե՛ս Merrill D. Peterson, *Starving Armenians: America and the Armenian Genocide, 1915-1930 and After*, University of Virginia Press, 2004, էջ 44:

<sup>7</sup> Տե՛ս M. C. Gabrielyan, *Armenia: A Martyr Nation*, London, 1918:

<sup>8</sup> Հյուսիսային Ամերիկայի Հայ Ավետարանական միութեան պաշտօնաթերթ, հունիս, 2010 թ., № 1, էջ 6 (սացանց՝ [http://www.aeuna.org/pdf/forum\\_june\\_2010.pdf](http://www.aeuna.org/pdf/forum_june_2010.pdf)):

ղյան ջարդերը՝ ընդհուպ երիտթուրքերի կողմից Հայոց ցեղասպանության իրականացում: Գրքի վերջին հատվածում նկարագրված են 1915-1917թթ. դեպքերը:

- Լեմկինը փաստեր է բերում նաև Ֆրեդերիկ Դևիս Գրինի «Հայկական ճգնաժամը Թուրքիայում» (*The Armenian Crisis in Turkey*) գրքից<sup>9</sup>: Այս գրքում տեղ գտած փաստերը վերաբերում են Օսմանյան կայսրությունում հայերի նկատմամբ իրականացված բռնություններին, կոտորածներին և Հայկական հարցի արծարծմանը՝ իբրև միջազգային դիվանագիտության առարկա:
- Որպես փաստական աղբյուր՝ Գրքաչափ ձեռագրի հեղինակն օգտագործել է բրիտանացի հայտնի պատմաբաններ Ջեյմս Բրայսի և Առնոլդ Թոյնբիի՝ 1916թ. Լոնդոնում հրատարակած «Հայերի վիճակը Օսմանյան կայսրության մեջ 1915-1916թթ.» (*Treatment of Armenians in the Ottoman Empire 1915-1916*) փաստաթղթերի ժողովածուն<sup>10</sup>, որտեղ զետեղված են բազմաթիվ հաղորդագրություններ և վկայություններ հայկական կոտորածների և տեղահանությունների վերաբերյալ: Այն հայտնի է «Կապույտ գիրք» անվամբ: «Կապույտ» գրքի մեջ կարևոր են հատկապես 1915-1916թթ. ընթացքում Օսմանյան կայսրությունում Հայոց ցեղասպանության իրագործման ժամանակ Գերմանիայի, Իտալիայի, Նիդեռլանդների, Շվեդիայի և Շվեյցարիայի ականատեսների բազմաթիվ վկայությունները: Գիրքն ունի ընդարձակ նախաբան, որտեղ շարադրված է հայ ժողովրդի համառոտ պատմությունը մինչև Մեծ եղեռնը: Ժողովածուն բովանդակում է 158 փաստաթուղթ (կազմում է 628 էջ): Նյութերն ընտրելիս Ջ. Բրայսը դրսևորել է անկողմնակալություն՝ ձգտելով ժողովածուում մեծ տեղ տալ չեզոք երկրների ներկայացուցիչների հեղինակած փաստաթղթերին: Հավաքած նյութերի վավերականությունը փաստելու համար կազմողն իրականացրել է վերլուծական բնույթի ծավալուն աշխատանք, կատարել համեմատություններ, փաստաթղթերի համադրություններ, ձգտել պատմական իրադարձությունները ներկայացնել այնպես, ինչպես դրանք եղել են<sup>11</sup>:
- Մյուս կարևոր փաստական աղբյուրը, որից օգտվել է Լեմկինը, «Գերմանիան, Թուրքիան և Հայաստանը» անունը կրող գերմանական և այլ աղբյուրների փաստաթղթային ապացույցների ընտրանին<sup>12</sup> է, որը վերաբերում է Օսմանյան կայսրությունում հայերի նկատմամբ իրականացված բռնություններին և ցեղասպանական գործողություններին:
- Հաջորդ աղբյուրը «Նինվեն և նրա մնացորդները»<sup>13</sup> (*Ninveh and its remains*) գիրքն է, որի հեղինակը անգլիացի դիվանագետ և հնագետ Օստին Հենրի Լայարդն է, ով մասնակցել է Նինվեի և Բաբելոնի պեղումներին և իր այս աշխա-

<sup>9</sup> Տե՛ս Frederick Davis Greene, *The Armenian Crisis in Turkey*, G. P. Putnam's Sons, The Knickerbocker Press, London, 1895:

<sup>10</sup> Տե՛ս Viscont Bryce, *Treatment of Armenians in the Ottoman Empire 1915-1916*, G. P. Putnam's Sons, The Knickerbocker Press, London 1916:

<sup>11</sup> Տե՛ս Հայկալյան հարց հանրագիտարան, Երևան, 1996թ., էջ 175, 176:

<sup>12</sup> Տե՛ս *Germany, Turkey and Armenia*, J.J Keliher and Co., London, 1917:

<sup>13</sup> Տե՛ս *Nineveh and its remains*, Austen Henry Layard vol. 1, John Murry, Albemarle street, 1867:

տության մեջ նա շարադրում է իր հայտնագործությունների համառոտ պատմությունը: Լայադը ճանապարհորդել է նաև Հայաստանում՝ ուսումնասիրելով նրա հնությունները, ճարտարապետությունը: 1878 թ. Սան Ստեֆանոյի պայմանագրի կնքման և ապա Բեռլինի կոնգրեսի ժամանակ վարել է հակառուսական ու հակահայկական քաղաքականություն և խոչընդոտել թուրքական լծից արևմտահայության ազատագրումը:

- «Լոնդոն թայմսի» թղթակից Չառլզ Բոստել Նորմանի «Հայաստանը և 1877թ. քարոզարշավը» (*Armenia and the campaign of 1877*) գիրքը<sup>14</sup>, որից օգտվել է Լեմկինը, վերաբերում է XIX դարում Օսմանյան կայսրությունում հայերի դրությանը և ռուս-թուրքական պատերազմներին:
- Ձեռագրի՝ Ադանայի կոտորածների մասին բաժնում Լեմկինը հիմնականում օգտվել է Ժորժ Բրեզոլի «Այստեղով թուրքերն են անցել...» (*Les Turcs ont passé là...*) հազվագյուտ մենագրությունից<sup>15</sup>: Այս գիրքն արժեքավոր աղբյուր է 1909 թ. ապրիլին Ադանա քաղաքում և հարակից հայկական գյուղերում տեղի ունեցած կոտորածների մասին: Գրքում առկա են 1909թ. Ադանայի կոտորածներին առնչվող բացառիկ վավերագրեր, վկայություններ ու լուսանկարներ: Ժողովածուի մեջ ամփոփված վավերագրերն օգնում են կողմնորոշվել երիտթուրքական հեղաշրջմանը նախորդած և հաջորդած ժամանակահատվածներում կիլիկյան կոտորածներին առնչվող տարաբնույթ մեկնաբանությունների հարցում: Ժ. Բրեզոլի հրատարակած մենագրությունը կիլիկյան կոտորածներին առնչվող պատմագրությանը նվիրված միակ փաստագրական հրատարակությունն է, որը հնարավորություն է ընձեռում տարատեսակ սկզբնաղբյուրների համադրման միջոցով պատկերացում կազմելու Կիլիկիայում և հարակից տարածաշրջաններում տեղի ունեցած կոտորածների մասին: Ժ. Բրեզոլի կազմած ժողովածուն առաջին անգամ լույս է տեսել Փարիզում 1911 թ.:
- Մյուս կարևոր աղբյուրը, որից օգտվել է Լեմկինը 1909թ. Ադանայի կոտորածների մասին գրելիս, ֆրանսիացի լրագրող, ազգությամբ հույն Ալեքսանդր Ադոսիդեսի «Հայերը և երիտթուրքերը: Կիլիկիայի կոտորածները» (*Arméniens et Jeunes-Turcs, les massacres de Cilicie*) գիրքն է<sup>16</sup>, որը գրվել է փաստական հարուստ նյութի (Թուրքիայում օտարերկրյա հյուպատոսների զեկուցագրեր, կաթոլիկ առաքելությունների պաշտոնական հաշվետվություններ, եվրոպացի և ամերիկացի քարոզիչների գրառումներ, նամակներ, Ադանայում և Կիլիկիայի այլ բնակավայրերում հայկական կոտորածների ականատեսների վկայություններ, մամուլ և այլն) առարկայական և մանրամասն ուսումնասիրության հիման վրա: Ադոսիդեսը նկարագրում է 1909թ. երիտթուրքերի կազմակերպած հայկական կոտորածները Ադանայում և շրջակայքում, նշում, որ դրանք իրականացրել են թուրքական կանոնավոր զորքերը և վարժեցված հրոսակախմբերը: Ադոսիդե-

<sup>14</sup> Sté u C. B. Norman, *Armenia and the campaign of 1877*, Cassel Petter & Galpin, London, 1878:

<sup>15</sup> Sté u Georges Brezol, *Les Turcs ont passé là... - La Vérité sur les Massacres d'Adana de 1909*, Paris, 1911:

<sup>16</sup> Sté u Adossides, *Arméniens et Jeunes-Turcs, les massacres de Cilicie*, Paris, 1911:

սին զարմացրել է այն անսկարագրելի դաժանությունը, որով ուղեկցվել է հայերի կոտորածը<sup>17</sup>: Ռաֆայել Լեմկինն օգտվել է նաև այլ արժեքավոր գրքերից:

Գրքաչափ ձեռագրում օգտագործված հարուստ գրականությունը փաստում է այն մասին, որ Ռ. Լեմկինն առանձնահատուկ կարևորություն է տվել հայոց պատմության, Հայկական հարցի ծագման, Օսմանյան կայսրությունում հայերի կոտորածների և Հայոց ցեղասպանությանը վերաբերող հարցերի ուսումնասիրությանը:

**բ. Հայոց պատմության առանձնահատկությունը Լեմկինի ընկալմամբ**

Գրքաչափ ձեռագիրը Ռաֆայել Լեմկինը սկսում է հայերի պատմության մասին ընդհանուր տեղեկություններով՝ նշելով հայերին բնորոշ առանձնահատկությունների մասին. «Հայերը տարբերվում են նրանով, որ առաջին ազգն են, որն ընդունել է քրիստոնեություն: Վաղ շրջանից հայերը հետապնդվում էին: Երեք հազար տարի Հայաստանը ոտնակոխ էր լինում ավերիչ բանակների կողմից, ու հայերը արտագաղթում էին երկրից: Այն կողոպտվում էր Նաբուգոդոնոսորի, Քսերքսեսի և Ալեքսանդրի, հռոմեացիների, պարթևների և պարսիկների, բյուզանդացիների, սարացիների և խաչակիրների, սելջուկների և օսմանցիների, ռուսների և քրդերի կողմից»<sup>18</sup>:

Ռաֆայել Լեմկինի բերած այս տեղեկությունները վերլուծելով՝ կարելի է նշել, որ նա, ուսումնասիրելով հայոց պատմությունը, հատուկ ուշադրություն է դարձրել երկու կարևոր փաստերի՝ հայերի՝ որպես առաջինը պետականորեն քրիստոնեություն ընդունած ազգը լինելու և պատմության վաղ շրջանից հալածանքների ենթարկվելու հանգամանքների վրա:

Անդրադառնալով Հայաստանում տեղի ունեցած ավերածություններին՝ Լեմկինն իր ձեռագրում, որպես առավել դաժան օրինակ, Լենկ-Թեմուրի արշավանքների մասին է հիշատակում. «Երբ Լենկ-Թեմուրը նվաճեց իր կայսրությունը Չինական պատից մինչև Մոսկվա և Միջերկրական ծով, իր հաղթական քայլերթի ճանապարհին իրեն ենթարկեց Հայաստանը, և երկրի քաղաքները ու գյուղերը մեկը մյուսի հետևից վերածվեցին ավերակների: Երբ Վան քաղաքի պաշարված երիտասարդները գերի հանձնվեցին, և մյուս բնակիչները կոտորվեցին, չորս հազար զինվորների այրեցին, իսկ շատերին էլ կենդանի թաղեցին: Կապեցին հազարավոր երիտասարդների և տարեցների ձեռքերը ու ոտքերը ու ձիու սմբակների տակ գցեցին»<sup>19</sup>:

Նշենք, որ Լենկ-Թեմուրի նվաճումների վերաբերյալ Լեմկինն առանձին ձեռագրի տեսքով հետազոտություն<sup>20</sup> է արել, որտեղ ներկայացվում են նաև Լենկ-Թեմուրի կողմից Հայաստանի նվաճումը և նրա դաժանությունները:

<sup>17</sup> Տե՛ս Հայկական հարց հանրագիտարան..., էջ 10:

<sup>18</sup> Raphael Lemkin Collection, Box 8, folder 14, *Manuscript on the Turkish Massacre of Armenians*, p. 1 (<http://digifindingaids.cjh.org/?pID=109202>).

<sup>19</sup> Նույն տեղում:

<sup>20</sup> Տե՛ս Raphael Lemkin Collection, Box 8, folder 12, *Tamerlane* (<http://digifindingaids.cjh.org/?pID=109202>):

Շարունակելով Հայաստանի՝ որպես պատերազմական թատերաբեմ լինելու թեման՝ Լեմկինը հիշատակում է նաև ավելի ուշ շրջանում թուրքերի և պարսիկների մրցակցության արդյունքում Հայաստանում կատարված ավերածությունների, ռուս-պարսկական պատերազմների հետևանքների մասին:

Լեմկինը կարևորում է պատմության ընթացքում հայոց եկեղեցու՝ հայ ժողովրդի միասնականության պահպանման գործում ունեցած դերը և նշում. «Դարերի ընթացքում հետապնդումների ենթարկվելով՝ հայոց եկեղեցին, որը հիմնադրել է Գրիգոր Լուսավորիչը, դարձել է հայ ազգի սիրտը, որը միասնական է պահել աշխարհով մեկ ցրված հայ ժողովրդին, որը եղել է հպատակ, բայց մինչև հիմա միասնական հավատք ունեցող ժողովուրդ: Մինչդեռ այն հայերը, ովքեր ընկան եվրոպական ազդեցության տակ, դարձան թերահավատ և անտարբեր կրոնի նկատմամբ, շարունակեցին աջակցել իրենց եկեղեցուն՝ հավատալով, որ եկեղեցու պահպանումը միակ հույսն է ազգային միասնության պահպանման, ապագայի համար, ինչպես եղել է նաև անցյալում»<sup>21</sup>:

Լեմկինը կարծում էր, որ հայ ժողովրդի գոյության համար առանցքային է եղել կրոնական գործոնը, և նվաճողները փորձել են կրոնափոխ անել հայերին, սակայն հաջողություն չեն ունեցել: Որպես օրինակ նա նշում է. «7-րդ դարում Մուհամմեդի գործերը սառնասարտորեն կտորեցին հազարավոր հայերի, որովհետև նրանք հրաժարվեցին մահմեդականություն ընդունել: Հայերի որդիներին օսմանյան իշխանությունները խլում էին և դաստիարակում իսլամիզմով ու հմտացնում պատերազմի արվեստով, սակայն մինչ այժմ հայերը պահպանել են քրիստոնեական հավատքը»<sup>22</sup>: Հայերի պատմության առանձնահատկությունների վերաբերյալ Լեմկինի լրացուցիչ հետաքրքրությունը թերևս պայմանավորված էր նաև նրանով, որ նա երբ որ 1921թ. սովորում էր Լվովի համալսարանում, Լվովում գոյություն ուներ կենսունակ հայկական համայնք, Լվովի համալսարանում դասախոսում էին հայկական ծագում ունեցող դասախոսներ, բացի այդ Լեմկինի դասընկերներից շատերը հայկական ծագում ունեին<sup>23</sup>: Հայ գաղթականները հաստատվել են Լվովում քաղաքի հիմնադրման ժամանակ՝ դեռևս XIII դարի II կեսին<sup>24</sup>: Հայ գաղթականների հոսքը դեպի Լվով շարունակվեց նաև հետագայում: XIX դարի վերջում և XX դարի սկզբում հայ գաղթականները, բնակվելով Լվովում, թուրքական հավաճանքների մասին տեղեկացնում էին լեհական թերթերում:

<sup>21</sup> Raphael Lemkin Collection, Box 8, folder 14, *Manuscript on the Turkish Massacre of Armenians*, p. 2. (<http://digifindingaids.cjh.org/?pID=109202>).

<sup>22</sup> Նույն տեղում:

<sup>23</sup> Słó Andrzej A. Zięba, *Genocidium: Rafał Lemkin i Ormianie polscy we Lwowie*, (անգլիսի <http://skarbnica.ormianie.pl/?idw=184>):

<sup>24</sup> Ավելի մանրամասն տե՛ս И. П. Крипякевич, К вопросу о начале армянской колонии во Львове, *Պարմա-բնաստիքական հանդես*, № 1, 1963:

#### գ. Հայկական հարցի ծագումը և մեծ տերությունների դիրքորոշման գնահատականը

XIX դարի ընթացքում հայերի նկատմամբ Օսմանյան կայսրությունում դաժան վերաբերմունքը և հալածանքները սովորական երևույթ էին, որոնք շատ հաճախ ուղեկցվում էին հայերի կոտորածներով: Այս ամենի մասին Լեմկինը բազմաթիվ փաստեր է բերում իր ձեռագրում. «1843թ. Հայաստանի հարավային լեռներում և Քուրդիստանում 10.000 նեստորականներ և հայ քրիստոնյաներ կոտորվեցին, շատ կանայք և երեխաներ ձերբակալվեցին և գերության վաճառվեցին»<sup>25</sup>:

Մյուս կոտորածը, որի մասին նշում է Լեմկինը, վերաբերում է 1876թ., երբ բռնկվեց ռուս-թուրքական պատերազմը, և Հայաստանը կրկին ռազմադաշտ դարձավ: Այս համատեքստում Լեմկինը ներկայացնում է 1877թ. հայերի դաժան կոտորածների՝ Բայազետում «Լոնդոն թայմսի» թղթակից Բ. Ս. Նորմանի նկարագրությունը<sup>26</sup> և տեղեկություններ է բերում, որ թուրք զինվորները, չերքեզներն ու քրդերը պատերազմական կոչեր էին անում, թե անհավատները, որոնց մեջ մտնում էին նաև հայերը, պետք է սպանվեն<sup>27</sup>: Ամենդ քրիստոնյաների կոտորածը Լեմկինը որակում է որպես հանցագործություն:

Ձեռագրում նշելով ռուս-թուրքական պատերազմի ավարտի մասին՝ Լեմկինը հատուկ կարևորություն է տալիս Հայկական հարցի՝ որպես միջազգային դիվանագիտության առարկա դառնալու հանգամանքին, և անդրադառնում է ինչպես Սան Ստեֆանոյի պայմանագրին, որի 16-րդ հոդվածը վերաբերում էր հայերին, այնպես էլ Կիպրոսի կոնվենցիայի կնքմանը<sup>28</sup>:

Սան Ստեֆանոյի պայմանագրի կնքմանը հաջորդում է Բեռլինի կոնգրեսի գումարումը. «1878թ. հուլիսին Բեռլինում տեղի ունեցավ մեծ տերությունների կոնգրեսը: Պատրիարք Ներսեսը հատուկ առաքելությամբ մեկնեց խնդրելու կոնգրեսին, որպեսզի Հայաստանի համար նշանակեն քրիստոնյա կառավարիչ, և որ եվրոպական տերություններն իրենցից կազմեն քրիստոնյա հայերի խնամակալներ: Արդյունքում 61-րդ հոդվածը ներառվեց Բեռլինի պայմանագրում»<sup>29</sup>:

Լեմկինն անդրադառնում է Բեռլինի պայմանագրի 61-րդ և 62-րդ հոդվածների բովանդակությանը և նշում. «Այն ամենը, ինչ խոստացվել էր խաղաղության և հայերի անվտանգության համար, կոնգրեսի հանցավոր հիմարությամբ ամբողջ հարցը թողնվեց թուրքական կառավարության ձեռքերում, որը ոչ միայն ճախողեց բարենորոգումները, այլև որոշեց ոչնչացնել կայսրության հայ բնակչությանը: Բեռ-

<sup>25</sup> Raphael Lemkin Collection, Box 8, folder 14, *Manuscript on the Turkish Massacre of Armenians*, p. 3. (<http://digifindingaids.cjh.org/?pID=109202>).

<sup>26</sup> St' u C. B. Norman, *Armenia and the campaign of 1877*, London, 1878, էջ 273:

<sup>27</sup> St' u Raphael Lemkin Collection, Box 8, folder 14, *Manuscript on the Turkish Massacre of Armenians*, p. 4. (<http://digifindingaids.cjh.org/?pID=109202>):

<sup>28</sup> Նույն տեղում, էջ 4-5:

<sup>29</sup> Նույն տեղում, էջ 5:

լինի պայմանագրի կնքումից ընդամենը երկու տարի հետո քրդերը սկսեցին հարձակվել հայերի վրա և սեպտեմբերի 20-ին ոչնչացրին 13 հայկական գյուղեր»<sup>30</sup>:

Լեմկինն ընդգծում է Օսմանյան կայսրությունում հայերի կոտորածների հարցում մեծ տերությունների անուղղակի մեղսակցության մասին, քանի որ ամեն ինչ տեղի էր ունենում նրանց թողտվությամբ:

«Բեռլինի կոնգրեսի մասնակից մեծ տերությունները 1880թ. սեպտեմբերի 7-ին ներկայացրին համատեղ նոտա<sup>31</sup>: Բարձր դուռը ամբողջովին արհամարհեց համատեղ նոտան՝ պարզապես ծանուցելով տերություններին, թե ինչ է մտադիր անելու: Տերություններն ըստ երևույթին մտածեցին, որ իրենք բավարար աշխատանք կատարել են: Դրա մասին է վկայում այն, որ Բիսմարկը կարծիք հայտնեց, թե կլինեն «լուրջ անհարմարություններ» Հայկական հարցի մասին հոգ տանելու հարցում: Այսպիսով, հայերին թողեցին թուրքերին, ովքեր շարունակեցին հայերին ոչնչացնելու իրենց ծրագրերը»<sup>32</sup>:

Անփոփելով նշենք, որ Լեմկինը Հայկական հարցի միջազգայնացումն իր ձեռագրում գնահատում է որպես Օսմանյան կայսրության տարածքում հայերի դրությունը բարելավելու փորձ, որը, սակայն, հակառակ արդյունք ունեցավ, նպաստեց, որպեսզի հայերին ոչնչացնելու ծրագրերը Օսմանյան կայսրությունը դարձնի նպատակաուղղված քաղաքականություն:

#### **դ. Լեմկինի անդրադարձը 1890-ական թթ. կոտորածներին**

Բեռլինի պայմանագրի կնքումից և Հայկական հարցի միջազգայնացումից հետո Օսմանյան կայսրությունը սկսեց կյանքի կոչել հայերի կոտորածները: Բնաջնջման գործն առաջին անգամ սկսվեց փոքր ծավալով և իրականացվեց երկրի տարբեր մասերում տարաբնույթ ձևերով: Հայերի բանտարկությունները, կոտանքները, արտաքսումները, սպանությունները, պարտադրված կրոնափոխությունն օսմանյան իշխանությունների համար դարձան օրակարգային հարցեր: Այս համատեքստում Լեմկինը նկարագրում է Օսմանյան կայսրությունում հայերի նկատմամբ կիրառված ճնշումները և առաջին հերթին համիդիե գնդերի ստեղծումը. «Հայերը հաճախակի հարձակման էին ենթարկվում զինված քրդերի կողմից, և հայերի բողոքներն իրենց դեմ իրականացված հանցագործությունների վերաբերյալ մնացին անարձագանք... 1892 թ. սուլթան Աբդուլ Համիդը կանչեց քուրդ ցեղապետերին Կոստանդնուպոլիս, նրանց ռազմական կոչումներ շնորհեց, ապահովեց նրանց

<sup>30</sup> Նույն տեղում, էջ 5-6:

<sup>31</sup> 1880թ. սեպտեմբերի 7-ի համատեղ նոտայով եվրոպական տերությունները սուլթանական կառավարությունից պահանջում էին անհապաղ իրագործել Արևմտյան Հայաստանի հայ բնակչության անվտանգությունն ապահովելու վերաբերյալ Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածով ստանձնած բարենորոգումների վերաբերյալ իր պարտավորությունները:

<sup>32</sup> Raphael Lemkin Collection, Box 8, folder 14, *Manuscript on the Turkish Massacre of Armenians*, p. 5-6, (<http://digifindingaids.cjh.org/?pID=109202>).



համազգեստով և զենքով: Ապա նրանց հետ ուղարկեց՝ կազմակերպելու իրենց ցեղերից «համիդեական» հեծելազոր գնդեր, թվով շուրջ 22.500 մարդ»<sup>33</sup>:

Հայերի կոտորածների իրականացումը, ըստ Լեմկինի, այն բանի հետևանք էր, որ Բեռլինի պայմանագիրը ստորագրած տերություններն իրենց դիվանագիտական նախաձեռնություններով ոչ թե բարելավում էին հայերի դրությունը, այլ ավելի էին բարդացնում իրավիճակը հայերի համար. «Հայերը խնդրեցին Բեռլինի երաշխիքները ստորագրած երկրներին պաշտպանել իրենց ավագակ և անօրեն քրդերի դաժան ճնշումներից, լուռ համաձայնվելով, որ եթե տերությունները հավանություն չտան, Բարձր դուռը որպես իրենց պաշտպաններ կնշանակի ամենավատ թշնամիներին»<sup>34</sup>:

Որպես հայերի կոտորածների և հայկական մշակութային արժեքների ոչնչացման ապացույց՝ Լեմկինը մեջբերում է ականատեսների, մասնավորապես 1892թ. ամերիկյան միսիոներների վկայությունները Հայաստանի հարավից<sup>35</sup>:

Ուշագրավ է, որ ձեռագրում ներկայացվում է, թե թուրքական իշխանությունները հայերի դեմ ուղղված սադրանքներ էին իրականացնում՝ ցույց տալու համար, որ հայերը փորձում են ապստամբություն բարձրացնել:

«1893թ. հունվարի 5-ի գիշերը թուրքական կառավարության վրա հարձակվելու վերաբերյալ պաստառներ հայտնվեցին Փոքր Ասիայի մի շարք կարևոր քաղաքներում: Իշխանություններն աջակցում էին, որ պաստառներն ուսանողները պահեն մզկիթներում: Իրադարձությունները ցույց տվեցին, որ դրանք արվել էին թուրքական կառավարության էմիսարների կողմից, ովքեր այդպիսով պատրվակ ունեցան մեղադրելու հայերին ապստամբելու մեջ»<sup>36</sup>:

Լեմկինն ընդգծում է, որ թուրքական իշխանությունների կողմից հայերին ուղղված՝ հեղափոխություն բարձրացնելու վերաբերյալ մեղադրանքներին զուգահեռ թուրքերի կողմից ձերբակալվում էին մեծ թվով հայտնի հայեր, ում նրանք համարում էին սադրիչներ, և նա որպես նշվածի ապացույց մեջբերում է բրիտանական հյուպատոսական զեկույցը, որը 1893թ. ապրիլի 10-ին Կոստանդնուպոլսից ուղարկվել էր Լոնդոն. «Կոստանդնուպոլսի ծանուցումները ցույց են տալիս, որ բրիտանական հյուպատոսներն Իզմիրում, Տրապիզոնում և Անատոլիայի այլ վայրերում ուղարկել են զեկույցներ քրիստոնյաների նկատմամբ թուրքական բռնությունների մասին: Այս զեկույցներն ընդգրկում են 1800 հայերի անուններ, ովքեր բանտարկվել էին տարբեր մեղադրանքներով»<sup>37</sup>:

Շարունակելով միտքը՝ Լեմկինը նշում է, թե վկայակոչված «ագիտատորներից» ոմանք ազատ արձակվեցին՝ ստիպված մեծ գումար վճարելուց հետո, մյուսները

<sup>33</sup> *Appleton, Annual Cyclopediā, 1880, p. 689.*

<sup>34</sup> M. C. Gabrielyan, *նշվ. աշխ.*, էջ 194:

<sup>35</sup> Raphael Lemkin Collection, Box 8, folder 14, *Manuscript on the Turkish Massacre of Armenians*, p. 7-8. (<http://digifindingaids.cjh.org/?pID=109202>).

<sup>36</sup> Նույն տեղում, էջ 8:

<sup>37</sup> Նույն տեղում, էջ 9:

մնացին բանտում, որոնց մեծ մասը սպանվեց: Միայն 56 հոգի Կոստանդնուպոլսից ուղարկվեցին 1893թ. հունիսի 28-ին Անգորա<sup>38</sup>:

Ձեռագրում մատնանշված հայերի կոտորածների և ճնշումների մասին փաստերը ցույց են տալիս, որ օսմանյան իշխանությունները ոչ միայն չէին պատրաստվում կատարել Բեռլինի պայմանագրով իրենց ստանձնած պարտավորությունները, այլև նախապատրաստվում էին զանգվածային կոտորածներ իրականացնելուն՝ նպատակ ունենալով թուլացնել հայ համայնքը:

Որպես թուրքական կառավարության կողմից իրականացված զանգվածային կոտորածների փաստ՝ Լեմկիհը բերում է Սասունի ապստամբության օրինակը և կրկին փաստում հայերի նկատմամբ բռնություններ սկսելու համար թուրքերի կողմից կիրառվող սադրիչ գործողությունների մասին. «Հայերի նկատմամբ հետապնդումները իրենց զագաթնակետին հասան 1894թ. սեպտեմբերին Սասունում: Քրդերը շարունակաբար անհանգստացնում էին հայերին, հարձակվում էին նրանց գյուղերի վրա, սպանում ու բռնաբարում, գողանում խոշոր եղջերավոր անասուններին: Կոտորածների ազդանշանը տրվում էր նրանով, որ մի շարք քրդեր սպանվում էին հայերի կողմից, ովքեր փորձում էին հետ վերադարձնել նրանց կողմից գողացված խոշոր եղջերավոր անասունները»<sup>39</sup>:

Բացի այդ Լեմկիհը վկայում է, որ կեղծ զեկույցներ էին ուղարկվում Կոստանդնուպոլս, թե հայերը ապստամբել են, և սուլթանը օգտագործեց առիթը՝ հայերին ոչնչացնելու վերաբերյալ հրաման արձակելու համար: Սուլթանը հրաման արձակեց՝ «Ով խնայի տղամարդկանց, կանանց կամ երեխաներին, անհավատարիմ է»<sup>40</sup>: «Զինվորականներից ոմանք քրդական հազուստ հազան և օգնեցին քրդերին հայերի դեմ պայքարում առավել հաջողությունների հասնելու համար: Զինվորականների որոշ փոքր խմբեր էլ մտան մի քանի հայկական գյուղեր, ասելով, թե իրենք եկել են, որպեսզի պաշտպանեն բնակիչներին որպես հավատարիմ հպատակների, և տեղակայվեցին տների միջև: Սակայն գիշերը նրանք վեր կացան և սպանեցին քնած գյուղացիներին»<sup>41</sup>:

Սուլթանի հրամանի հետևանքը եղավ այն, որ թուրքերը և քրդերը հարձակվեցին հայերի վրա՝ սպանելով 6-ից մինչև 10 հազար մարդու: Ինչ վերաբերում է այդ կոտորածների դեպքում հայերի նկատմամբ կիրառվող դաժանություններին, ապա Լեմկիհը դրա մասին փաստեր է բերում նաև Ֆրեդերիկ Դևիս Գրինի «Հայկական ճգնաժամը Թուրքիայում» (*The Armenian Crisis in Turkey*) գրքից. «6-ից 10 հազար անձինք այնպիսի ճակատագրի հանդիպեցին, ինչպիսին խավարի դարերում Աֆրիկայում դժվար թե հնարավոր լիներ ականատես լինել, քանի որ Աֆրիկայում կանայք և մանկահասակ երեխաները կարող էին առնվազն ստրկական կյանքի հնարավորություն ունենալ: Քառասուն գյուղերը ամբողջովին ոչնչացվեցին»<sup>42</sup>:

<sup>38</sup> Նույն տեղում:

<sup>39</sup> Նույն տեղում, էջ 9-10:

<sup>40</sup> Նույն տեղում, էջ 10:

<sup>41</sup> Նույն տեղում, էջ 34:

<sup>42</sup> Frederick Devis Greene, *The Armenian Crisis in Turkey*, New York – London, 1895, pp. 17-24.

Անդրադառնալով Սասունի կոտորածի հետաքննության նպատակով հանձնաժողովի ստեղծմանը՝ Լեմկինը նկարագրում է, թե ինչպես էր թուրքական կողմը փորձում ձախողել հետաքննությունը:

«Մեծ Բրիտանիայի ճնշման տակ հետաքննություն կատարող թուրքական հանձնաժողովը 1894թ. նոյեմբերին ուղարկվեց Հայաստան, բրիտանական, ռուսական և ֆրանսիական պատվիրակների ուղեկցությամբ՝ բացահայտելու, որ ոչ մի հեղափոխության փորձ չի եղել: Սուլթանը խնդրեց ԱՄՆ-ի նախագահին ներկայացուցիչ նշանակել, սակայն երբ առաջարկվեց, որ Սվազում ԱՄՆ-ի հյուպատոս պարոն Ջնդեթը կատարի անկախ հետաքննություն և զեկույց ներկայացնի ԱՄՆ-ի կառավարություն, սուլթանը հրաժարվեց այդ նշանակումից»<sup>43</sup>:

Սուլթանի գործողությունները հանգեցնում են նրան, որ սուլթանի հետաքննիչ հանձնախումբը, Լեմկինի բնորոշմամբ, վերածվում է խեղկատակության, քանի որ եվրոպացի պատվիրակներին արտոնված չէր անկախ հետաքննություն անցկացնել<sup>44</sup>: Այդ իսկ պատճառով 6 ամիս անց եվրոպական պատվիրակները լքեցին իրենց թուրք գործընկերներին:

Լեմկինի կարծիքով թուրքական և եվրոպացի հանձնաժողովականների միջև առաջացած անհամաձայնությունը պայմանավորված էր նրանով, որ թուրքերը վախենում էին, թե այն կեղծ տեղեկությունները, որ նրանք առաջ էին քաշել Հայաստանում առաջացած իրավիճակի շուրջ, ջրի երես դուրս կգային: Դրա մասին է վկայում եվրոպացի պատվիրակների հանձնաժողովի զեկույցը:

Որպես թուրքական իշխանությունների կողմից հայերի նկատմամբ իրականացված հանցագործության ապացույց՝ Լեմկինը ներկայացնում է պրոֆեսոր Յոհաննես Լեփսիուսի նկարագրությունը Սասունի կոտորածների հետաքննության անցկացման մասին<sup>45</sup>:

1894թ. Սասունի կոտորածների հետաքննության արդյունքում էլ Բեռլինի պայմանագիրը ստորագրած տերությունները 1895թ. մայիսին Թուրքիային են ներկայացնում Մայիսյան բարենորոգումների ծրագիրը, որը Լեմկինի բնորոշմամբ՝ «Օսմանյան Թուրքիայի և իր հայկական հպատակների տարածայնություններն ընդլայնելու, ոչ թե հարթելու, «բարեփոխումների» սխեմա էր: Բարեփոխումները 1895թ. հոկտեմբերին ընդունվեցին սուլթանի կողմից, ով միաժամանակ լայնածավալ կոտորածներ կազմակերպելու հրաման սովեց»<sup>46</sup>:

Լեմկինի այս միտքն անուղակիորեն բխում է նրա այն տեսակետից, թե օտարերկրյա միջամտությունները հայերի դրությունը բարելավելու քողի ներքո ոչ միայն որևէ դրական արդյունքի չէին հանգեցնում հայերի համար, այլ ընդհակա-

<sup>43</sup> Raphael Lemkin Collection, Box 8, folder 14, *Manuscript on the Turkish Massacre of Armenians*, pp. 11-12 (<http://digifindingaids.cjh.org/?pID=109202>).

<sup>44</sup> Նույն տեղում:

<sup>45</sup> St' u Lepsius, *Armenia and Europe*, Berlin, 1896:

<sup>46</sup> Raphael Lemkin Collection, Box 8, folder 14, *Manuscript on the Turkish Massacre of Armenians*, p. 15 (<http://digifindingaids.cjh.org/?pID=109202>).

ռակը, ավելի էին բարդացնում հայերի վիճակը՝ հանգեցնելով ավելի լայնածավալ կոտորածների:

Որպես նշվածի օրինակ նա գրում է, թե 1895-1896թթ. ջարդերի ժամանակ 100.000 մարդ սպանվեց, 12.000 տներ և խանութներ այրվեցին, 12.000 անձինք ստիպված էին մահմեդականություն ընդունել, և 400.000-ը չքավորության մեջ մնացին: 1896թ. օգոստոսին ջարդերից կատաղած 20 հայեր գրոհեցին Օտտոմանյան բանակը Կոստանդնուպոլսում, և հաջորդ 2 օրերին մոտ 6000 հայեր սպանվեցին Կոստանդնուպոլսում<sup>47</sup>:

Հաջորդիվ Լեմկինն ընդգծում է, թե եվրոպական տերությունների քայլերը հայերի կոտորածները կանխելու համար բավարար չէին, և բերում է համապատասխան փաստեր. «Կոստանդնուպոլսի ջարդերի ընթացքում Միշել Հերբերտը՝ բրիտանական գործերի հավատարմատարը, և որոշ դեսպաններ արեցին այն, ինչ կարող էին հայերի կոտորածները կանխելու համար... բայց «եվրոպական համերգը»<sup>48</sup> ոչինչ չարեց: Գերմանիայի կայսրն ավելի հեռուն գնաց: Նա հատուկ դեսպանություն ուղարկեց՝ ներկայացնելու սուլթանին իր ընտանիքի դիմանկարը՝ որպես հարգանքի նշան»<sup>49</sup>:

### Ե. Ռ. Լեմկինը՝ 1909թ. Ադանայի կոտորածների մասին

1909թ. ապրիլին տեղի ունեցած Ադանայի կոտորածներն Օսմանյան կայսրությունում նոր իշխանության եկած երիտթուրքական կառավարության վարած քաղաքականության առաջին հետևանքն էին: Անդրադառնալով այդ հանգամանքին՝ Լեմկինը ներկայացնում է երիտթուրքերի իշխանության գալու գործընթացը և հայերի ու մյուս ազգերի ոգևորվածությունը, որը պայմանավորված էր նրանց մեջ առաջացած այն հավատով, թե երիտթուրքերի՝ իշխանության գալն իրավիճակի փոփոխության կհանգեցնի կայսրության տարածքում և կնպաստի իրենց իրավունքների վերականգնմանը:

Հայերը ողջունեցին երիտթուրքական կառավարության իշխանության գալը և հավատ ունեին նրանց կարգախոսների նկատմամբ՝ «ազատություն», «եղբայրություն» և «հավասարություն»: Իսկ 1876թ. ընդունված, բայց չգործադրված Միդհատյան սահմանադրության վերականգնումը հայերը համարեցին որպես կայսրության տարածքում յուրաքանչյուր ազգի և կրոնի ներկայացուցիչների միջև հավասարության ստեղծման ելակետ:

<sup>47</sup> Տե՛ս Raphael Lemkin Collection, Box 8, folder 14, *Manuscript on the Turkish Massacre of Armenians*, էջ 16 (<http://digifindingaids.cjh.org/?pID=109202>):

<sup>48</sup> «Եվրոպական համերգը» միջազգային հարաբերությունների համակարգ էր Եվրոպայում, որը գոյություն ուներ Նապոլեոն Բոնապարտի՝ Ֆրանսիայում իշխանությունից հեռանալուց հետո՝ մինչև Առաջին համաշխարհային պատերազմի բռնկումը: Այդ համակարգի հիմնադիրներն էին Մեծ Բրիտանիան, Ավստրիան, Ռուսաստանը և Պրուսիան: Ավելի ուշ Ֆրանսիան նույնպես տերությունների այս «խմբակի» անդամ դարձավ:

<sup>49</sup> Raphael Lemkin Collection, Box 8, folder 14, *Manuscript on the Turkish Massacre of Armenians*, p. 16 (<http://digifindingaids.cjh.org/?pID=109202>).

Հայերը և մյուս քրիստոնյա ժողովուրդների հույսերը, որոնք կապվում էին երիտթուրքական կառավարության հետ, ոչ միայն չիրականացան, այլև տեղի ունեցավ հակառակ գործընթացը. «Չէր սպասվում, թե մահմեդական բնակչությունը, որի հիմնական մասն անգրագետ էր, կպահպանի Սահմանադրության սկզբունքները. միակ տարրը, որի վրա քաղաքականապես վերափոխված Օսմանյան կայսրությունը կարող էր հենվել, քրիստոնյա բնակչությունն էր, որն ավելի լավ էր կրթված: Այդ իսկ պատճառով հայերը դարձան սպառնալիք երիտթուրքերի համար, ովքեր վախենում էին, որ նոր համակարգում հայերը իշխանության կգան: Սահմանադրությունը դարձավ ոչ թե հայերի ազատագրման ազդանշան, այլ հայերի մահվան դատավճիռը»<sup>50</sup>:

Լեմկինը հայերին սպառնացող վտանգի ահագանգ է համարում Ադանայի կոտորածը. «1909թ. ապրիլի 13-ին, երբ Աբդուլ Համիդի հետևորդները խռովություն բարձրացրին, Ադանա քաղաքի և նահանգի մահմեդականները հարձակվեցին հայերի վրա և սպանեցին 25.000-ից 50.000 մարդու, իսկ 150.000 մարդ տառապում էր հիվանդություններից և սովից»<sup>51</sup>: Լեմկինի դիտարկմամբ Ադանայի ջարդերի պատասխանատուն երիտթուրքական իշխանություններն էին, և դրա մասին է վկայում նրա հետևյալ մեջբերումը, թե Թալեաթ փաշան պարծենում էր, որ ինքը ավելի շատ հայ է ոչնչացրել 30 օրում, քան Աբդուլ Համիդը երեսուն տարիների ընթացքում<sup>52</sup>: Այս մասին գրելով՝ Լեմկինն ի ցույց է դնում, որ երիտթուրքական կառավարությունը ոչ միայն շարունակեց իր նախորդի հակահայ քաղաքականությունը և հալածանքները հայերի նկատմամբ, այլև այս հարցում գերազանցեց նախորդ իշխանությանը:

Լեմկինը նշում է, որ Ջորջ Բրեգոլն իր «Այստեղով թուրքերն են անցել...» («Les Turcs ont passela») գրքում հավաքել է ջարդերի նկարագրությունների վկայություններ, որոնք տեղի էին ունեցել Ադանայում և շրջապատող քաղաքներում ու գյուղերում 1909թ.: Կոտորածը Ադանա քաղաքում տևել է 3 օր, և գրեթե ամբողջ հայկական թաղամասն այրվել է: Լեմկինը մանրակրկիտ փաստեր է բերում կոտորածների ընթացքում թուրքերի կողմից հայերի նկատմամբ իրականացված դաժանությունների մասին:

Ադանայի ջարդերը Լեմկինը որակում է որպես ցեղասպանություն՝ օգտագործելով «Մարդկայնության և քրիստոնեության դեմ ուղղված հանցագործություն» բնորոշումը ու նշում, որ Թոմաս Դևիդսոն Քրիստին<sup>53</sup> նկարագրել է մարդկայնության և քրիստոնեության դեմ իրականացված հանցագործությունը՝ Ադանայի ջարդերը:

<sup>50</sup> Lemkin Collection, Box 8, folder 14, *Manuscript on the Turkish Massacre of Armenians*, p. 17 (<http://digifindingaids.cjh.org/?pID=109202>):

<sup>51</sup> Նույն տեղում, էջ 18:

<sup>52</sup> Նույն տեղում:

<sup>53</sup> Թ. Դ. Քրիստին (1843թ. հունվարի 21 - 1921թ. մայիսի 25) իտալո-ամերիկյան քաղաքացիական պատերազմի վետերան էր, միսիոներ և մանկավարժ Օսմանյան կայսրությունում 1877-1920թթ.: 1893թ. իր ընտանիքի հետ տեղափոխվել է Տարսոս, որտեղ ստանձնել է Սուրբ Պողոս ինստիտուտի նախագահությունը: Նա եղել է Օսմանյան կայսրությունում հայերի կոտորածների և մասնավորապես Ադանայի ջարդերի ակնատեսը:

Լեմկինը բազմաթիվ փաստեր է բերում ջարդերի ընթացքում թուրքերի կողմից իրագործված անմարդկային դաժանությունների մասին:

Հետաքրքրական է, որ Լեմկինը մեջբերում է «Journal officiel» թերթի՝ 1909թ. մարտի 18-ի համարում տեղ գտած ֆրանսիացի գրող Դենի Քոշենին<sup>54</sup> հասցեագրված հեռագիրը, որը, պատմաբան Ռայմոնդ Գևորգյանի մեկնաբանմամբ, մեծ հարված էր օսմանյան իշխանությունների համար<sup>55</sup>: «Ամբողջ տեղեկատվությունը մենք ունենք, համընկնում է եվրոպական մամուլի հրապարակումների հետ, և այն ապացուցում է գինվորների մասնակցությունը Ադանայի և այլ նահանգների մասսայական կոտորածներին: Ապրիլի 25-ին տեղի ունեցած երկրորդ կոտորածը իրականացվեց հենց զորքերի կողմից, որոնք ուղարկվել էին Դեդե Ագաշից, որպեսզի վերջ տան անկարգություններին: Այնտեղ տեղի ունեցան իրադարձություններ՝ աննկարագրելի վայրագություններով: Ամբողջ Կիլիկիան ավերվեց՝ դառնալով սովի և թշվառության գոհ»<sup>56</sup>:

### **Ամփոփելով նշենք հետևյալ եզրակացությունները.**

- Ձեռագրում բերված փաստերը ցույց են տալիս, որ Ռ. Լեմկինն ուսումնասիրել է ոչ միայն Հայոց ցեղասպանության հետ կապված դեպքերը, այլև հայոց պատմության ավելի վաղ շրջանը, երբ Հայաստանը ենթարկվել է օտարների ասպատակություններին:
- Գրքաչափ ձեռագրի ուսումնասիրությունը թույլ է տալիս նշել, որ Լեմկինը կարևորել է Հայաստանի աշխարհագրական դիրքը, հայերի՝ քրիստոնյա ազգ լինելու հանգամանքը և ազգապահպանման գործում Հայ առաքելական եկեղեցու դերը:
- Լեմկինը փաստերով ի ցույց է դնում նախքան Հայոց ցեղասպանության իրագործումը օսմանյան իշխանությունների հանցավոր գործելակերպը հայերի նկատմամբ: Ապա անդրադառնալով Հայկական հարցի՝ միջազգային դիվանագիտական առարկա դառնալու հանգամանքին և Բեռլինի պայմանագրի կնքմանը՝ նա ընդգծում է Օսմանյան կայսրությունում հայերի կոտորածների հարցում մեծ տերությունների անուղղակի մեղսակցության մասին, քանի որ այդ կոտորածները տեղի էին ունենում նրանց թողտվությամբ: Օսմանյան իշխանությունները, հայերի կոտորածների իրագործման հարցում չհանդիպելով դիմադրության, աստիճանաբար ավելի լայնամասշտաբ ջարդեր էին կազմակերպում:
- Լեմկինը ներկայացրել է, որ Հայկական հարցից և հայկական փոքրամասնությունից ազատվելու համար օսմանյան իշխանությունները սադրիչ գործո-

<sup>54</sup> Դենի Քոշենը ֆրանսիացի գրող էր և կաթոլիկական աջ թևի քաղաքական գործիչ: 1893-1919թթ. նա ներկայացնում էր Փարիզը Ֆրանսիայի Ազգային ժողովում: Նա լավ տեղեկացված էր Հայկական հարցի մասին Պոլ Կամբոնի հետ անձնական ընկերության շնորհիվ:

<sup>55</sup> Տե՛ս Raymond Kevorkian, *The Armenian Genocide: A complete history*, I. B. Tauris & Co Ltd, London 2011, էջ 93:

<sup>56</sup> Lemkin Collection, Box 8, folder 14, *Manuscript on the Turkish Massacre of Armenians*, p. 45 (<http://digifindingaids.cjh.org/?pID=109202>).

դությունների էին անցնում՝ հայերի նկատմամբ կիրառելով բռնություններ և ջարդեր:

- Երիտթուրքերի իշխանության գալու հանգամանքը, ըստ Լեմկինի, հույներ էր առաջացրել հայերի, ինչպես նաև կայսրության մյուս հպատակ ժողովուրդների շրջանում, սակայն այդ հույները ոչ միայն չարդարացան, այլև իրագործվեցին հայերի գանգվածային տեղահանությունը և ջարդերը: Այս համատեքստում 1909թ. Ադանայի կոտորածը նա դիտարկում է որպես մի քանի տարի հետո սպասվող տեղահանությունների և ջարդերի կազմակերպման համար կարևոր ահազանգ:
- Հիմնվելով ականատեսների վկայությունների և փաստերի վրա՝ Լեմկինը օսմանյան իշխանությունների կողմից իրագործված հայերի հալածանքները և կոտորածները համարում է որպես ցեղասպանական գործողություններ՝ բնորոշելով որպես «Մարդկայնության և քրիստոնեության դեմ ուղղված հանցագործություն»:

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ, 1890-ԱԿԱՆ ԹԹ. ԶԱՐԴԵՐԸ ԵՎ 1909Թ. ԱԴԱՆԱՅԻ ԿՈՏՈՐԱԾԸ ՌԱՖԱՅԵԼ ԼԵՄԿԻՆԻ «ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐՔԱԶԱՓ ՁԵՌԱԳՐՈՒՄ»

Նարեկ Պողոսյան

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում քննության են առնվում Ռաֆայել Լեմկինի՝ «Հայկական կոտորածների վերաբերյալ գրքաչափ ձեռագրում» Հայկական հարցի, 1890-ական թթ. ջարդերի և 1909թ. Ադանայի կոտորածների վերաբերյալ դիտարկումները: Լեմկինը, օգտվելով բազմաթիվ աղբյուրներից, նկարագրում է հայոց պատմության առանձնահատկություններն իր ընկալմամբ, Հայկական հարցի ծագումը և Օսմանյան կայսրության իշխանությունների կողմից հայերի նկատմամբ իրականացվող ցեղասպանական գործողությունները: Ձեռագրում Լեմկինը փաստում է Օսմանյան կայսրությունում XIX դարի վերջին հայերի կոտորածների հարցում մեծ տերությունների անուղղակի մեղսակցության մասին, քանի որ այդ կոտորածները տեղի էին ունենում նրանց թողտվությամբ: 1909թ. Ադանայի կոտորածը նա դիտարկում է որպես մի քանի տարի հետո սպասվող տեղահանությունների և ջարդերի կազմակերպման համար կարևոր ահազանգ:

**Բանալի բառեր՝** Ռաֆայել Լեմկին, Գրքաչափ ձեռագիր, Հայկական հարց, հայերի կոտորածներ, ականատեսների վկայություններ, ցեղասպանական գործողություններ:

АРМЯНСКИЙ ВОПРОС, РЕЗНЯ 1890-ЫХ ГГ., АДАНСКИЕ ПОГРОМЫ 1909 Г.  
В «РУКОПИСИ ОБ АРМЯНСКОЙ РЕЗНЕ» РАФАЭЛЯ ЛЕМКИНА

*Нарек Погосян*

РЕЗЮМЕ

В статье рассматриваются наблюдения Рафаэля Лемкина о армянский вопрос, резни 1890-ых гг., Аданские погромы 1909 г. в «Рукописе по размеры книги о армянских резни». Лемкин с использованием нескольких источников, описывает особенности его восприятия истории армян, происхождение армянского вопроса, и акты геноцида против армян со стороны османских властях. В рукописи Лемкин утверждает косвенное соучастие великих держав о массовые убийства армян в Османской империи в конце 19-го века, которые происходили при их попустительстве. Аданские погромы 1909 г. он рассматривает в качестве важного сигнала для организации предстоящих депортаций и массовых убийств ожидаемое через несколько лет.

**Ключевые слова:** Рафаэль Лемкин, Рукопись по размеры книги, Армянский вопрос, резня армян, свидетельства очевидцев, акты геноцида.

ARMENIAN QUESTION, MASSACRES OF 1890S AND THE 1909 ADANA  
MASSACRES IN «TURKISH MASSACRE OF ARMENIANS - BOOK-LENGTH  
MANUSCRIPT» OF RAPHAEL LEMKIN

*Narek Poghosyan*

SUMMARY

The article examined the observations of Raphael Lemkin in “Turkish Massacre of Armenians - Book-Length Manuscript” about the arise of Armenian Question, massacres of 1890 and the 1909 Adana massacres. Lemkin using multiple sources, describes the features of its perception of Armenian history, the origin of Armenian Question, the acts of genocide against Armenians by the Ottoman authorities. Lemkin’s manuscript shows the indirect complicity of the great powers of the Ottoman Empire in the late 19th century massacres of Armenians as massacres that were taking place with their permission. Lemkin views the Adana massacres as an important signal for the organization of the forthcoming deportations and massacres.

**Keywords:** Raphael Lemkin, Book-length manuscript, the Armenian question, Armenian massacres, eyewitness accounts, genocidal acts.